

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԱՅ ԲՈՒԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԽՈՒԹԻՒՆ.

(Երբեք. Արարար, 1884 թ. ԺԲ.):

ԳԼ. ԺԱ.

Հայ նախարարների վերադարձից քսան և հինգ օր յետոյ, երբ մոգայեալ մոգերի հետ առաջին անգամ փորձ փորձեց եկեղեցու դռները քանդել, Ս. Ղեռնդ քահանան թէև նախարարների խորհրդին կատարելապէս տեղեակ էլ չէր, բայց բրեքով ղինեալ ժողովրդի հետ հզօր ընդդիմութիւն ցոյց տուեց և մոգերին ու մոգպետին այսպէս հալածելուց յետոյ, սկսեց ժամերգութեան պաշտամունքը կատարել: Այս դիմադրութիւնը ոգևորեց բոլոր հայերին, որոնք ամենայն տեղ սկսեցին դիմադրել և հալածել մոգերին:

Հայերի այս դիմադրութիւնը տեսնելով՝ մոգպետը կամենում էր գրել և համոզել թագաւորին որ հրաժարուի հայերին մոգութեան կրօնին դարձնելու մտադրութիւնից. բայց Վասակ սիրտ տուեց մոգպետին շուտով չլիհաւիլ, և նորան օգնելու համար սկսեց ստուարացնել իւր գունդը. այս իսկ նպատակով Աղուանից երկրում եղած այրուձին ևս Հայաստան բերել տուեց, և սկսեց մարտել բռնութեամբ՝ որին հակառակ էր մոգպետը և ասում էր. « երբ որ բռնութեամբ կռուենք, աշխարհը կը քանդուի և, թէ մարդկանց և թէ արքունիքին մեծ վնաս կըլինի »: Բայց Վասակ, որ ի սրտէ ընդունել էր մոգութիւնը, աշխատում էր մոգակրօն դարձնել, ոմանց՝ կահ կարասիքով խաբելով, ոմանց՝ աղաչելով և խնդրելով, իսկ ռամիկներին՝ չարաչար տանջելով: Իւրաքանչիւր նախարարների տան վերայ մի մի մոգպետ նշանակեց: Բռնի ստիպումէր զոհելոց միս ուտել և արեգական երկրպագութիւն մատուցանել: Մոգերի թիկնապահների կանայքը այնքան երես առան, որ մի կիրակնոմտի համարձակուեցին եկեղեցու ճրագները հանգցնել և միանձնուհիների հանդերձները պատառել. Վասակ՝ իւր պատանդ որդւոց աղատութեան, իւր փեսայ Վարազվադանին կորագլուխ դարձնելու և, ի տեղի Արշակունի հարստութեան՝ ըստ խոստման Յազկերտի Սիւնեաց հարստութիւն հաստատելու համար՝ քան պարսիկները աւելի ջերմեռանդութեամբ էր աշխատում մոգակրօնութիւն Հայաստանում հաստատելու: Եպիսկոպոսները

Վասակի այս վարմունքից վրդու՛ուած, Խաչ և Աւետարանն ի ձեռին դիմեցին ուխտապահ հախարարներին և Հայոց զօրքին՝ ասելով. «Ձեզ բոլորիդ էլ աղաչում ենք այս սուրբ Աւետարանովը եթէ մարգապանն ու մոգպետը ձեր խորհրդով են գործում՝ այն չարիքները, առաջ մեզ մորթեցէք, յետոյ եկեղեցուն ձեռնամուխ եղէք: Իսկ եթէ առանց ձեր գիտութեան է, հենց այսօրուանից վրէժխնդրութիւն լինի»: Բոլոր ուխտապահները մի սիրտ մի հոգի Վարդան սպարապետի առաջնորդութեամբ ղինուեցին, և երեք դունգ բաժանուելով՝ շրջապատեցին մոգական խումբը. ոմանց սպանեցին, ոմանց էլ բանտարկեցին: Վասակ Սիւնի առ ահի, միաբան ձեռքաւ ուխտապահների հետ և բոլոր հախարարները միասին սուրբ Աւետարանի վերայ երգման կնիքը դրոշմելով միաբերան ասացին. «Տէր, ընդունիր մեզ, ինչպէս տնառակ որդի. մեղանչեցինք երկրնքի և քո առաջը . . . և ինչպէս դու թափեցիր քո սուրբ արիւնը մեղաւորների համար, ոյժ տուր մեզ թափելու մեր արիւնը այս խոստովանութեան և իւրաքաչիւրիս մեղքերի թողութեան համար». Երգման սուրբ աւետարանը եպիսկոպոսներին յանձնելուց և եկեղեցի մտնելով առ Աստուած աղօթելուց յետոյ Հայոց զօրքերը առանց մեծամեծների հրամանին սպասելու՝ աւերեցին Բագրևանդի Զարեհաւան գիւղի ատրուշանները. պաշտաման կրքակը ջուրը թափեցին և մոգերին էլ սպանեցին: Այս դէպքը պատահեց գարնան վերջին օրելում. ամառնային տօթերն անցնելուց յետոյ Հայոց զօրքերը յարձակուեցին պարսիկների ձեռքը եղած Արտաշատ, Փառնի քաղաքների, Արտագերս ու Անի բերդերի և այն քաղաքների, աւանների ու գիւղերի վերայ, ուր ատրուշաններ կային. բոլոր տեղերը գրաւեցին, քանդեցին կործանեցին պարսից տներն ու ատրուշանները: Կին, տղամարդ, ռամիկ և ազատ միաբան աղաղակումէին «միայն քաջութեամբ կռուէնք, և անուն ու հոգի միայն ժառանգենք»:

Հայոց աշխարհի այս տագնապի ժամանակ Աղուանից եպիսկոպոսը և հաղարապետը գալով Հայաստան՝ օգնութիւն խնդրեցին Հոնաց և Պարսից գնդերի դէմ, որ եկել էին ասպատակելու երկիրը և բռնի ստիպելու՝ մոգութիւն ընդունել: Հայոց աւագանին քաջալերեց պատգամաւորներին և յորդորեց մի առժամանակ դիմադրել մինչև օգնութիւն կրհասնէին: Եւ մի և նոյն ժամանակ քրիստոնէութեան վերահաս վտանգը յայտնելու և օգնու-

Թիւն խնդրելու համար թղթեր գրեցին Յունաց կայսրին և արքունիքին, Յունաց բաժնում եղած Աղձնեաց բզեշխին, Անգեղտան իշխանին, Անտիոքայ մեծ սպարապետին և Վահան Ամատունուն, Վարդանի Հմայեակ եղբորը, Մեհրուժան Արծրունուն և Ատոմ Գնունուն ուղարկեցին կայսեր մօտ՝ որ թուղթը յանձնեն և ի դիմաց Հայոց աշխարհի՝ օգնութիւն խնդրեն եկեղեցին պաշտպանելու համար: Թէոդոս կայսրը թէւ խոստացաւ օգնել, բայց շուտով մեռաւ, իսկ նորա յաջորդ Մարկիանոսը ոչ միայն չօգնեց, այլ թելատրուած իւր աւագանուց ու արեւելեան գնդի զօրավար Անատօլից՝ Հայոց խորհուրդը յայտնեց Յազկերտին և նորից բարեկամութեան դաշն հաստատեց Պարսից հետ: Պատգամաւորները շուտով ձեռնունայն վերադարձան: Յունաց բացասելը և, որ վստոն է, Պարսից հետ նորից դաշնակցութիւնը չրմհատեցրին հայերին, որոնք թէւ ոչ մի տեղից օգնութեան յոյս չունէին, բայց քաջալերուած եպիսկոպոսների խօսքերով աղգին ու եկեղեցուն սպառնացող վտանգին դիմագրաւելու համար զօրքերը երեք գունդ բաժանեցին: Առաջին գունդը յանձնուեց Ներշապուհ Ռմբոսեանին՝ Ատրպատականի կողմից Հայաստանի սահմանը պաշտպանելու: Երկրորդ գունդը յանձնուեց Վարդան Մամիկոնեանին՝ դիմագրաւելու ձորա մարզպանին՝ որ մտել էր Աղուանից երկիրը եկեղեցիները աւերելու և ատրուշաններ հաստատելու: Իսկ երկրորդ գունդը յանձնուեց Վասակ Սիւնուն՝ երկրի մէջն միջնագաւառները պաշտպանելու համար:

Երբ որ բանակները իրանց սահմանեալ տեղերը գնացին, Վասակ դաւաճանութեամբ եղած տնօրէնութիւնը յայտնեց Միհրնէրսէհ հաղարապետին, և մոգութեան վերակացու Նիխորական Սեբուխտին: Իսկ ձորայ մարզպանը Սեբուխտից իմանալով որ Վարդան սակաւաթիւ զօրքով Աղուանից պաշտպանութեան է դիմել, ինքն էլ բազմաթիւ զօրքերով անցաւ Կուր գետը և Խաղխաղ քաղաքի մօտ տեղի ունեցաւ ճակատը: Հայերը յաղթեցին, Պարսից զօրքերը կոտորուեցին, այս կոտորածից հազիւ մինը ազատուեց, որ բուն բանակին հաղորդեց յաղթուելու գոյժը:

Վեռները ապաստանած երկիւղաբեկ աղուանները լսելով Հայոց այս յաղթութիւնը, եկան և խառնուեցին նոցա հետ, և նոցա հետ միասին յարձակուեցին Աղուանից և Հոնաց աշխարհների սահմանի մէջ տեղը եղած պահակի վերայ: Ղազակը քանդեցին և

սլարսիկ զօրքերին վանելուց յետոյ, պահակի պահպանութիւնը յանձնեցին Աղուանից, Հայոց, Վրաց և Աղուանից գաշնակցութեան մէջ մտան նաև քրիստոնեայ Հոները:

Երբ որ Վարդանի առաջարկութեամբ Հայոց զօրքը Աղուանից աշխարհում փառաւոր յաղթութիւններ էր կատարում, Վասակ իւր համախոհների հետ գրգռելով սուրբ Աւետարանի վերայ կապուած ուխտին, սկսեց նեղել քրիստոնեայ հայերին. բերդերի և ամրոցների վերայ իւր համախոհներից վերակացուներ նշանակեց, աւերեց Արտաշատ քաղաքը իւր հաճանքով, Մամիկոնեան և Վամսարական նախարարութեանց որդւոց իրանց դայեակներից յափշտակելով կալանաւորեց Սիւնեաց անառիկ ամրոցներում, թոյլ տուեց եկեղեցիները քանդել, քահանաներին կապեալ բանտարկելուց յետոյ՝ նոցա ընտանիքը գերի վարել տուեց:

Վարդան երբ լսեց այս աղէտները, շտապաւ վերադարձաւ Հայաստան. Վասակին և Սիւնեաց աշխարհը նեղը ձգելուց յետոյ՝ ձմերեց Արարատեան հաճանքում՝ աւելի մեծ պատերազմի պատրաստութիւն տեսնելով, եպիսկոպոսների և եկեղեցու ուխտի որոշմամբ եկեղեցու այս յաղթանակը տօնուեց Աստուածայայտնութեան տօնի հետ ամբողջ Քաղոց ամիսը պահելով և հսկմամբ ազօթելով:

Ուխտապահները իմանալով որ Յազկերտ կարի խոցուած Հայոց ընդգրկմութիւնից՝ վրէժխնդիր պէտք է լինի սաստիկ պատերազմով, դեսպան ուղարկեցին յայտնելու նորան Ա. հայերի հաւատարիմ հպատակութիւնը դէպի պարսից արքունիքը, Բ. եղած ընդգրկմութիւնը որպէս հետեւանք Վասակի անխոհեմութեան, որ գիտենալով հանդերձ թէ Հայք իրանց կրօնական համոզմանց մէջ անդրդուելի են, խոստացաւ հաւատաւորիս անել նոցա, որով և սարսափելի սրածութեան պատճառ դարձաւ: Դեսպան ուղարկեց և Վասակ ընդհակառակն ճգնելով ապացուցանել թէ ինքն ջանագիր է եղել մոգութիւնը տարածել իւր համախոհ նախարարների հետ, իսկ նախարարներից ոմանք առ ոչինչ համարելով արքունի հրովարտակը՝ բաժանուել են և ընդգէմ զինուել թագաւորական հրամանին: Յազկերտ երկու կողմից եկած դեսպաններին էլ լսելուց յետոյ, որովհետեւ նոր էր վերադարձել արեւելքի անյաջող պատերազմից, ներքին խռովութիւնների առաջքը առնելու համար՝ թողութեան հրովարտակ գրեց դէպ ի հպատակ աղգերը, իսկ

կողմից անյիշատարութիւն տալարկելով և նոցա կողմից հաւատարիմ հպատակութեան երդումն պահանջելով: Նա իւր հրովարտակով պատուիրումէր կապանքի մէջ եղածներին՝ արքունի հրամանով արձակել, յափշտակուած գոյքերը յետ դարձնել և խլուած թէ պարգեական և թէ փողով գնուած երկիրները ու կալուածները տէրերին յանձնել:

Հայերը թողութեան հրովարտակը ստանալուց յետոյ չը միամտուեցին, որովհետեւ Պարսից արքունիքից շատ անգամ այդպիսի հրովարտակներ ընդունել և հակառակն էին տեսել. ուստի չը թաւաղան և չը ցրուեցին. այլ կազմ և պատրաստ մնացին դիմադրելու այն յարձակմանը, որ գործերի հանգամանքից գուշակումէին: Եւ արդար և, Յազկերտ երբ տեսաւ թէ Յունաց Կայսերութիւնը թէև քի իստոնեայ, բայց անտես առնելով քրիստոնէութիւն, բարեկամութեան դաշն է կապում — ոգի առաւ. առաջին անյաջողութիւնը գործակատարների անհոգութեան վերագրելով՝ նորից պահանջեց որ իւր բոլոր հպատակ քրիստոնեայ ազգերը մոգութեան կրօնին դառնան: Եւ իւր այս մտադրութիւնը ի կատար ածելու համար բազմաթիւ զօրքերով և պատերազմական փղերի երամակներով Միհրներսէհ հազարապետին ու Մուշկան — Նիսալաւուրտ իշխանին ուղարկեց Հայաստան:

Պարսից զօրքերը բանակեցին Փայտակարանում. Միհրներսէհ հաւաստի լինելով Վասակի ի սրտէ ուրացութեանը, թէև ներքուստ ատումէր նորան, բայց կանչեց իւր մօտ. սիրով ընդունեց, խոստացաւ Հայոց վերայ թագաւորեցնել, եթէ կարողանայ թագաւորի հրամանը կատարելով՝ Հայերին մոգական կրօնին դարձնել: Վասակ հրապուրուելով այս խոստմամբ, սկզբում թողութեան հրովարտակը ցոյց տալով՝ համոզումէր միայն հաւատարմութեամբ հպատակել Պարսից արքունեաց և Վարդանի խորհրդակցութիւնից յետ կենալ: Վասակին գործակից և գործիք էին Զանգակ և Պետրոս անուամբ երէցները, և Սահակ անուամբ սարկաւազը: Այս հաւատուրաց և կեղծաւոր հոգեւորականների ձեռքով Վասակ Սիւնեաց աշխարհը մոգութեան դարձրեց, ուխտապահներից ոմանց դէպ ի ինքն հրապուրեց և իւր ուխտագրութ խմբին խառնեց, և յայտնեց Միհրներսէհին թէ, Վրացիք, Աղուանք և Աղձնիք հրաժարուել են սուրբ ուխտի միաբանութիւնից, թէ, Հայերը իրանց մէջ երկպառակեալ են, թէ, թէև Հոները հաստատ

են իրանց ուխտին, բայց նոցա առաջքը առնուած է ձորա պահակի ամրացնելովը՝ և Պարսիկ զօրքերի պահպանութեան յանձնուելովը: Միհրներսէհ Վասակի այսքան ջանքը տեսնելով՝ իրանից աւելի՝ նորա վերայ վստահ մեծամեծ սլարգաներով վարձատրեց նորան ու նորա ուխտագրութ ընկերներին. և զօրքերի առաջնորդութիւնը յանձնեց Մուշկան—Նիսալաւուրտին պատուիրելով Վասակի խորհրդով շարժուել, ինքն վերադարձաւ արքունիք և պատմեց թագաւորին Վասակի ջանքը. իսկ թագաւորը ի պատասխանի՝ ասաց. « Եթէ այն անօրէնը մեծ պատերազմից ազատուի, մահուան դառն բաժակը նորան խմել կըտամ մեծ անարգութեամբ » . այս ասաց, թերեւս մտածելով թէ, մի մարդ՝ որ իւր հայրենիքին և հայրենական սրբութեանցը դաւաճանումէ, ինչպէս կարող է հաւատարիմ լինել օտար երկրի և օտար կրօնից:

451 թուին, Վարդան, որի տիրապետութեան տակն էր Այրարատեան աշխարհն ու Արտաշատ մայրաքաղաքը, խմանալով որ Պարսից զօրքը մեծ պատրաստութեամբ հասել է Հեր և Զարեանդ գաւառները, ժողովեց այն ուխտապահ նախարարներին՝ որոնք Զատիկի օրնի պատճառով իրանց ընտանեաց մօտն էին գնացել: Սամատունեաց Առանձար սեպուհին սակաւաթիւ զինուորներով ուղարկեց Պարսից բանակը լրտեսելու. Առանձար յաջողութեամբ իւր այս յանձնարարութիւնը կատարելուց յետոյ պարսից վերջապահ գունդը խորտակեց ու մեծ աւարով վերադարձաւ:

Թէեւ Վարդան շատ աշխատեց ճակատել պարսից գէմ Հեր և Զարեանդ գաւառներում, ջանալով չըթողնել նոցա յառաջ գալ, բայց մինչև պատրաստութիւն տեսնելը պարսիկները հասան Արտաղ գաւառը, և Աւարայրի դաշտում, Տղմուտ գետի մօտ բանակեցին. Հայոց գունդը նորա հանդէպ բանակեց. բանակի մէջն էին Ս. Յովսէփի Վաթուղիկոս և Եկեղեցու ուխտը: Ս. Յովսէփի հրամանով Եկեղեցու ուխտը զօրականների հետ պաշտամամբ աղօթքով անցկացրեց գիշերը, հոգեւորականք մկրտեցին չրմկրտուածներին և սեղան ուղղելով՝ հաղորդեցին բոլոր բանակին և Ս. Ղեւոնդ քաջալերեց զօրքերին՝ ոգեւորիչ ատենաբանութեամբ: Նախ քան պատերազմը Վարդան նոյնպէս քաջալերեց զօրքերին ի միջի այլոց, ասելով. « Զրախսենանք հեթանոսների բազմութիւնից և յետ չքաշուենք. եթէ մեր կեանքի ժամանակը հասել է, սրտի ու-

րախուժեամբ ընդունենք այս պատերազմի սուրբ մահուամբ, բայց միայն, մեր տղամարդութեան հետ վատութիւն չընառնենք » :

Ս. Վարդան յիշելով իւր՝ և նախարարների առ երես ուրացութիւնը գոչեց. « Եւ ահա, եկաւ, հասաւ ժամանակը, հեռացնենք մեզանից ամեն կեղտ անուշ, երկիւղը՝ թերահաւատութեան նշան է. թերահաւատութիւնը մենք մեզանից վաղուց ենք մերժել. թերահաւատութեան հետ էլ երկիւղը մեր մաքիցն ու խորհրդիցը թող կորչի » :

Երբ Ս. Յովսէփի հրամանով հոգեւորական պաշտամունքը կատարուեց, հաղորդուողները հաղորդուեցին և չըմկրատուածները մկրտուեցին. բոլորը միասին գոչեցին. « թող մենք ևս արգարների մահուամբ մեռնենք, և Աստուած եկեղեցին չը տայ հեթանոսների ձեռքը » :

Արեւածագին՝ յարգարուեց երկուստեք ճակատը. փոփոխակի յաջողութեամբ մինչև երեկոյ պատերազմեցին, երկու կողմն ևս թէ յաղթուած և թէ յաղթած էր համարվում իրան. բայց որովհետև պատերազմի մէջ ընկել էր սպարապետն Վարդան այս պատճառով և, հայոց զօրքերը ցրուեցին: Վարդանի հետ հաւատոյ համար նահատակութեան սլաակը ընդունեցին Խորէն Խորխոռունին, Արտակ Պաշունին, Տաճատ Գնթունին, Հմայեակ Դիմաքսեանը, Ներսէս Քաջբերունին, Վահան Գնունին, Արսէն Ընծայեցին և Գարեգին Սրուանձտեանը. հայոց կողմից նահատակուածների թիւը նախարարների հետ 1036 էր, իսկ սպարսից կողմից ընկածները 3544 անձինք: Պատերազմը եղաւ յինանցը, բայց եկեղեցին որոշեց տօնել այս պատերազմի յիշատակը բուն բարեկենդանի հինգշաբթի օրը:

ԳԼ. ԺԲ.

Պատերազմը վերջանալուց յետոյ Վասակ կրկնապատկեց իւր ջանքը մոգութիւնը տարածելու համար. իւր գործիք խաբեբայ երէցներով պարզամիտներին որսումէր, իսկ սպարսիկ գնդովը յարձակվումէր այն ամուր բերդի վերայ, ուր ամրացել էին Հայոց զօրքն ու քահանաները: Վասակ կամեցաւ բերդականներին խաբել, սակայն չը կարողացաւ. վասն զի լաւ յայտնի էին իւր ստերգմնութիւնն և զաւաճանութիւնը: Բաւ անուամբ մի սեպուհ պարսպի վերայից Մուշկան - - Նիսալաւուրտի առաջին յիշեց այն բոլոր չա-

քիքները, որ Վասակի երեսից տեսել էր Հայոց աշխարհը և եօթն հարիւր մարդով գիշերը դուրս եկաւ բերդից ու գնաց. իսկ բերդում մնացածները առ սակաւութեան ուտելեաց՝ անձնատուր եղան: Վասակի խորհրդով՝ Մուշկան — Նխալաւուրտ 100 անձինք սպանել տուեց. իսկ Սուրբ Յովսէփ, Աւանդ երէց և իւր ընկերները որովհետեւ գլուխները սրի առաջ խոնարհեցնելով հանդերձ բողոքեցին յանուն արքունեաց՝ բոլոր չարեաց սլափառ Վասակին համարելով: Մուշկան — Նխալաւուրտ չը համարձակուեց նոցա սպանել, այլ ծեծել տուեց և բանտարկեց. իսկ միւս քահանաներին ուղարկեց իրանց տեղերը աշխարհի շինութեան և խաղաղութեան հրաման տալով: Բայց հայերը այնքան խաբուած լինելով Պարսից ստապատիր խոստմամբ՝ գոչեցին. « Ել ինչ սէտք են մեզ բոլորովին այս աշխարհի անցաւոր կեանքը. և կամ էլ ինչո՞ւ ենք տեսնում արեւ մեր սիրելիներից յետոյ: Ել մտիկ չենք անիլ քո խաբերայ հրամաններին և չենք ընկնիլ քո ձեռքը, ով անօրէն իշխան »: այս ասացին և թողին այնուհետեւ ամեն միւր իրանց բնակարանները: Հարսները առագաստից դուրս եկան, փեսաները՝ սենեակներից, երիտասարդներն ու կոյսերը և մարդկանց ու կանանց բազմութիւնը դնում և բնակումէին անապատների և լեռների ամուր ու անխաբ տեղերում. աստուածալաշտութեամբ՝ քարանձաւների մէջ գաղանաբար բնակութիւնը աւելի լաւ էին համարում քան ուրացութեամբ՝ իրանց բնակարանների մէջ փափկածալը: Ոմանք՝ Խաղտեաց անլոյս երկրներումը, իսկ ոմանք՝ հարաւային կողմերում՝ Տմորեաց անմատչելի ամրութեանց մէջ էին առանձնացել: Կէսը Արցախի թանձրախիտ մայրեաց անտառում, իսկ մնացեալը՝ միջնաշխարհի (Այրարատ) նահանգ ամրութեանց մէջ էին տեղաւորուած: Բոլորն էլ մեծ համբերութեամբ տանումէին նեղութիւններին, և խնդրումէին Աստուծուց, որ չըտեսնեն սուրբ եկեղեցիների աւերմունքը:

Մուշկան — Նխալաւուրտ և Վասակ նոր ուժով յարձակուեցին Կապոյտ լեռան ամրոցում պառսպարեալների վերայ. երբ չը կարողացան բան անել՝ սկսեցին ասպատակ սփռել և հրձիգ անել շատ տեղեր: Ի վրէժխնդրութիւն՝ Տմորեաց ամրոցում եղածներն ու Արցախի անտառներում սլափապարեալներն էլ յարձակուեցին պարսից սահմանի վերայ. մեծամեծ կոտորածներ արին և շատ գերիներով ու աւարներով յետ դարձան:

Խախտեաց լեռներում պատասպարուածներն էլ յարձակուեցին Տայքում գտնուած արքունի զօրքերի վերայ. կոտորեցին և մնացեալներին էլ փախստական վարեցին Պարսկաստան. Այս յարձակմանը մասնակից էր նաև Վարդանի եղբայր Հմայեակ Համազասպեանը, որ Յուսաստան պատգամաւոր գնացած լինելով, թէև մեծ պատերազմին ներկայ չըկարողացաւ գտնուել, բայց յետոյ ուխտապահ նախարարներին հետ յարձակմունքներ գործելով պարսից զօրքերի վերայ՝ մեծ մեծ կոտորածներ էր անում:

Մեծ պատերազմից յետոյ Մուշկան – Նիսաւաւուրտ յայտնեց թագաւորին երկու կողմից ևս եղած վնասները, պատճառ համարելով Վասակին՝ որ իւր երկդիմի վարմունքով այս արիւնահեղ խռովութեանց առիթ դարձաւ. իսկ թագաւորը Միհրներսէս հազարապետի խորհրդով Արշական Ատրորմիզդ իշխանին 453 թուին Հայաստանին մարզպան կարգեց, պատուիրեց կրօնի ազատութիւն տալ, երկիրը սիրով նուաճել և Հայ գլխաւոր հոգեւորականներին, նախարարներին ու Վասակին արքունիք ուղարկել:

Ատրորմիզդ մտաւ Հայաստան առաջարկեց արքունի սլայմանները. բայց գրեթէ ընդ միշտ խաբուած ժողովուրդը չէր հաւատում Պարսից դրան խաղաղասէր առաջարկութեան. շարունակվումէին յարձակումները, որոնց մէկի մէջ սպանուեց և Հմայեակ Համազասպեան:

Ատրորմիզդ երկիրը ըստ մասին նուաճելուց յետոյ՝ արքունի հրամանին համեմատ գործին մասնակից և գլխաւոր պատճառ համարուած նախարարներին հետ Պարսկաստան ուղարկեց գլխաւոր հոգեւորականներին՝ որոնք են Ս. Յովսէփ կաթողիկոս, Ռըշտունեաց Սահակ եպիսկոպոս՝ որ մի ատրուշան էր քանդել և կրակի պաշտօնեաներին գանահարել, Արծրունեաց Մուշէ երէց՝ որ մի կրակատուն էր աւերել և մոգերին չարաչար տանջել, Արծայ Սամուէլ քահանայ և Աբրահամ սարկաւազ՝ որոնց Վասակ բանտարկել էր Արտաշատում եղած ատրուշանը քանդելու համար, Ղևոնդ և Արշէն երէցներ և Քաջաջ սարկաւազ:

Նկեղեցին առանց հովուապետի չըթողնելու համար 453 թ. Դուինու առաջին ժողովը գումարուեց, ուր և, ժողովի որոշմամբ Հայրապետական Աթոռը փոխադրուեց Դուին և Ս. Յովսէփի կանխագոյն հաճութեամբ ու ժողովականաց համաձայնութեամբ կաթողիկոս ընտրուեց Մելիսէ Մանազկերտցին, որին յաջորդեց Մովսէս Մանազկերտցին:

Ս. Յովսէփ և իւր ընկերները կապեալ տարւոյ մէջն Պարսկաստան. ճամապարհին՝ դիպուածով պատահեց Վասակ Սիւնին՝ որ նոյնպէս գնումէր արքունիք իւր գործոց հաստցման մեծամեծ պարգևները և Հայոց թագաւորութիւնը ստանալու յուսով. երբ նա ողջունեց կապեալներին՝ Ս. Ղեոնդ, Յովսէփ կաթողիկոսի հրամանով, ի պատասխանի՝ ասաց. « քո դելը որ քեզ սագրեց նենգել Սուրբ Աւետարանին՝ կարծել է տալիս քեզ թէ Արիք հաստցումն կրտան Հայոց աշխարհի թագաւորութեամբ, . . . բայց եթէ արդարեւ դու կենդանի, գլուխդ ուսերիդ վերայ Հայաստան տեսնես՝ ուրեմն Տէր Աստուածը չէ, որ իմ մէջ խօսումէ » :

Եւ արդարեւ, հրապարակական ատենում (որին ներկայ էին Վասակի ձեռքով արքունիք ուղարկուած Մամիկոնեան և Վամառական նախարարների մանուկները), ի դիմաց բոլոր նախարարների՝ Արշաւիր Վամարականը բոլոր կոտորածի և Հայոց և Պարսից վնասների պատճառը համարեց ա. արքունի հրամանը՝ որով ստիպումէին բոլոր այլակրօն մանաւանդ քրիստոնեայ հպատակներին դառնալ մոգակրօնութեան, բ. Վասակի դաւադրութիւնը՝ որ հաստատեց ապացուցութիւններով, թէ ինչպէս Վասակ Ս. Աւետարանի վերայ երգուեց միաբան մնալ ուխտապահների հետ և դրժեց իւր երդմանը, թէ ինչպէս Վարդանին Յունաց սահմանից յատուկ թղթով և երդմամբ յետ դարձրեց՝ միասին ընդդէմ պարսից մաքառելու կրօնի պաշտպանութեան համար և դաւաճանեց իւր խոստմանը, թէ ինչպէս միւս մեծամեծների հետ յատուկ պատգամաւորով թուղթ ուղարկեց Յունաց կայսեր՝ օգնութիւն խնդրելու և Հայաստանը նորա խնամակալութեանը յանձնելու ևլն. նոյն ինքն պարսիկները սկսեցին դատախազ լինել և ասել. « Արքունի զօրքերի շատ հարուածների, Հայոց աշխարհի աւերուելու և արքունի հարկերի կորստեան սկզբնապատճառը այդ մարդը (Վասակ) եղաւ » . Հոգեւորականների կողմից խօսեց Սահակ եպիսկոպոս, և Վասակի ապիրատութեան իբրեւ վկայ՝ հրաւիրեց Վրացիներին՝ որոնց երբեմն իշխան էր կարգուած Վասակ, վկայ կոչեց և նոյն ինքն նորա ազգական սիւնեցիներին՝ և յաւելցրեց. « դորա (Վասակի) Հայաստանում, մարզպանական իշխանութեան գործառնութիւնից յայտնի է արդէն, որ մի տարուայ մէջ ամբողջ աշխարհը կորցրեց. « սուտ յուսով դա ձեզ ուրախացրեց. բայց ոչ դուք, ոչ դա, և ոչ ձեզանից յետոյ եկողը

կարող է մեր մէջ տեսնել այն (ուրացութիւնը)՝ դորան (Վասակին) ինչ կամենումէք արէք, մեզ՝ էլ ինչ էք հարցնում » :

Վասակը յանցապարտ մնաց, և զրկուելով իւր բոլոր պատիւներէն՝ անարգարար ձգուեց մահապարտների բանտը, և « այն մարդը, որ կամենումէր Հայոց աշխարհի վերայ դաւաճանութեամբ թագաւորել, նորա գերեզմանի տեղն անգամ չերեւցաւ » չը յիշուեց նորա անունը սրբերի կարգում : Նորա յիշատակը չըմօտեցաւ եկեղեցու սեղանին : ոչ ինչ չար բան չըմնաց՝ որ չըգործեց իւր կենդանութեան ժամանակ, և չըմնաց ոչինչ մեծամեծ չարիքներից՝ որ չըպատահեց նորան՝ նորա մահուան ժամանակ : Վասակից յետոյ Սիւնեաց իշխան կարգուեց Վարազվադան, որ նոյնպէս չարաչար մահուամբ մեռաւ :

Իսկ կապեալները նորից բանտարկուեցին Վրկանում : յետոյ, երբ թագաւորը Քուշանաց վերայ գնաց՝ նոցա էլ հետն առաւ և բանտարկել տուեց Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքում, վերսկացու կարգելով մի մոգպետ՝ որ կատարեալ էր Զրադաշտական կրօնին : Մոգպետը սկզբում նեղումէր կապեալներին և ստիպում՝ կրօնափոխ լինել, բայց յետոյ տեսնելով նոցա տոկունութիւնն ու համբերութիւնը, ինքն ևս քրիստոնէութիւն ընդունեց :

Նիւշապուհ իշխանը, որին արքունի հրամանով յանձնուած էին կապեալները, իմանալով մոգպետի քրիստոնեայ դառնալը, հեռաւոր երկրում մի վհի մէջ ձգել տուեց և այնպէս նահատակեց, իսկ կապեալ հոգեւորականներին՝ շատ հարց ու փորձից յետոյ չարաչար տանջանքներով նահատակեց : Նահատակների սուրբ նշխարները մի քանի օրից յետոյ, ոմն Խաթիկ վեր առաւ և Նիւշապուհ քաղաքի քրիստոնեաներին ու կապեալ նախարարներին տուեց : Այս սրբոյ տօնը, մեր եկեղեցին տօնումէ բարեկենդանի վերջին շաբթի երեքշաբթի օրը Ս. Ղևոնդեանց անուամբ :

Երկու երէցներ Աբրահամ և Խորէն անուամբ, որոնք կամովին գնացել էին Ապար աշխարհը սրբերին սպասաւորելու՝ նոցա նահատակութիւնից յետոյ աքսորուեցին Ասորեստան և աւետաւոր հրեշտակ դարձան ընդ մէջ կապեալ նախարարների և Հայաստան աշխարհի : Այս երանելի սրբերը ստանումէին քրիստոնեաներից կամաւոր նուէրներ և կապեալների պիտոյից համար էին գործադրում : Խորէն չըկարողանալով տանել Ասորեստանի խորշակին՝ շուտով վախճանուեց, իսկ Աբրահամ եկաւ Հայաստան, որի գա-

լուսոր մեծ սգևորութեամբ ընդունուեց, որովհետև նորանով տեսնումէին իրանց սիրելի բարեկամներին, ամուսիններին և որդւոցը՝ որոնք հեռաւոր օտարութեան մէջ էին: Նորանով առնումէին փափագը այն սիրելիների՝ որոնք հաւատոյ համար իրանց կեանքը զոհումէին՝ նորանով լսումէին բանտարկեալների սիրալիր խօսքերն ու նահատակեալների վերջին օրհնութիւնը: Արրահամ ավտիւնով իւր թշուառ հայրենակիցները ամեն տեղ ընդունւումէր իբրև մխիթարիչ հրեշտակ. նա նշանակուեց Բզնունեայ եպիսկոպոս և իւր անձը ուղղութեան, առաքինութեան ու ճշմարիտ աստուածապաշտութեան օրինակ տալով իւր հօտին՝ վախճանուեց խորին ծերութեան մէջ:

Երբ նախարարք և նախարարազուէք սլարսկաստանի բանտերումն էին մաշվում՝ նոցա կանայքը և ընտանիքը հաւասար շինականներին, « թողնելով իրանց սրահներն ու սրահակները, առաջաստներն ու փափուկ բաստեռուկքը, անձաւներում և անտառներումն էին բնակում. ըստին էլ հաւատի համար առաքինացած, թողնելով կանացի մարմնի բնական տկարութիւնը, այր մարդկանցից աւելի տոկունութիւն էին ցոյց տալիս: Նաշիհի տեղ կորեկ հաց էին ուտում, ախորժահամ գինիների տեղ ջուրըն անգամ չափով էին խմում. ոսկիհուռն կերպասեայ զգեստների տեղ՝ ստե էին հագնում. փափուկ անկողիներն տեղ փախթի վերայ գետնախշտի էին լինում: Չէին օծվում իւղերով, չէին սանրվում. կանացի բնութեան յատակ շատախօսութիւնը և քօղի տակից աչքը այս և այն կողմը յաճելը թողին բնաւին. յայտնի չէր թէ ո՞րն է տիկինը և ո՞րը աղախինը: Նոցա մարմնի մերթը սեւացել էր, վասն զի ցերեկը արեւակէզ էին լինում իսկ գիշերը բացօթեայ՝ ցրտին ենթակայ: Նոցա մշտնջենաւոր մրմունջը սաղմոսն էր, և մխիթարութիւն՝ Սուրբ Պիղքը: Ի հեռուստ իրանց բանտարկեալ սիրելիներին մխիթարութեան վարդապետ դարձան. իրանց ձեռի վաստակով ապրեցին, իսկ արքունուստ սահմանեալ թոշակը ուղարկեցին իրանց բանտարկեալ սիրելիներին: Իրանց սիրելիների անուններով յիշատակարաններ էին կանգնել և իւրաքանչիւրի անունը նորա վերայ նշանակել. հեռուից եկողներին էլ չէին հարցնում թէ երբ կըլինի, որ տեսնեն իրանց սիրելիներին. այլ նոցա խնդրուածքն էր թէ, ինչպէս սկսեցին, լցուած երկնաւոր սիրով քաջութեամբ էլ վերջացնել: »

Բանտարկեալ նախարարները 35 անձինք էին որոնց հետ շատ շինականներ էլ կային. սոքա բոլորը 9 տարի վեց ամիս կապած ձեռքերով ու ոտքերով տանջվում էին բանտի մէջ. հացը նեղութեամբ էին ուտում, ջուրը պապակուելուց յետոյ հազիւ ճարում. գիշեր և ցերեկ դատապարտուած էին խաւարի: Այդ անտանելի նեղութեան մէջ նոքա իրանք իրանց սովորեցին կարգալ, և նոցա միակ միտիթարութիւնն էր Սուրբ Գիրքը:

Յազկերտ կարծելով թէ նոքա այդ սոսկալի տանջանքից ազատուելու համար գոնէ յանձն կառնեն մոգակրօնութիւնը՝ իւր հաղարապետի ձեռքով առաջարկեց նոցա մեծամեծ պարգևներ, ազատութիւն և նախնեաց պատիւը եթէ յանձնկառնեն մոգութիւն բայց նոքա մերժելով մերժեցին և հաղարապետին ասացին. « աղաչում ենք քեզ և քեզանով թագաւորին, ինչ որ մտքներումդ գրել էք մեզ համար՝ կատարեցէք »: Հաղարապետը մտքումը գովելով նոցա հաստատամտութիւնը, սկսեց այնուհետև թախանձել թագաւորին, որ նոցա ազատէ: Հրե — Շողումշապուհ, որին յանձնուած էին պատժապատճեններ, մեծ սէր և խնամք էր ցոյց տալիս նոցա վերայ. ծերերին իբրև հայր պատուելով իսկ երիտասարդներին՝ իբրև որդի սիրելով: Վերջապէս Յազկերտ բանտարկեալներին արձակեց, և սպառազենութիւնը արքունուստ հոգատալով՝ ուղարկեց պատերազմ, ուր նոքա մեծամեծ քաջութիւններ գործեցին և Յազկերտ լսելով այս՝ խոստացաւ մեծ պատու հայրենիք աւարկել, բայց խոստումը դեռ չը կատարած մեռաւ: Վերջապէս Հայ Նախարարները Յազկերտի որդու՝ Պերոզի թոյլ տուութեամբ 464-ին վերադարձաւ Հայաստան և նոյն թուին Հայաստանի վերայ մարդպան կարգուեց Ատրիշնասպ Յովմանեան Նախարարների վերադարձով չը վերջացաւ կրօնական պատերազմը այլ շարունակուեց ընդերկար, պարսիկները պատեհ առիթ գտնելով կրօնափոխութիւն էին պահանջում. իսկ հայերը քրիստոնէական հաւատոյ սիրով յառուած՝ յամառ ընդդիմանութիւն էին ցոյց տալիս:

(Շաքս-Նալէլի)

Յ. Վ. Մ.